«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման Գործում

Դաստիարակ՝ Լիլիթ Սարգսյան

Մանկապարտեզ՝ «Գորիս համայնքի թիվ 6 նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ

2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3

ԳԼՈՒԽ I Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձև և նրա նշանակությունը-----.----------6

1.1. Էքսկուրսիայի անհրաժեշտության հոգեբանական մանկավարժական հիմնավորում----------5-6

1.2 Էքսկուրսիայի կրթադաստիարակչական նշանակությունը----------6

ԳԼՈՒԽ 2. Էքսկուրսիաների նպատակը և բովանդակություն-------7

2.2.Էքսկուրսիայի անցկացման մեթոդիական ----------9

ԳԼՈՒԽ 3 Էքսկուրսիայի նշանակություն---------- 11

ԳԼՈՒԽ 4 Այցելություն – էքսկուրսիաների նշանակությունը---14-

Հետազոտական աշխատանքի ընթացք----------16

Դիտարկողների կարծիքը----------18

Եզրակացություն----------20

Օգտագործված գրականության ցանկ ----------21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդուն շրջապատող բնությունն կենդանական աշխարհը ոչ միայն անսահման գիտելիքներ են պարունակում իրենց մեջ, այլև անչափ հետաքրքիր են, գրավիչ, սիրելի և օգտակար : Բնության միջոցով կամ բնության զրկում դաստիարակել երեխային, նշանակում է՝ ձևավորել որոշակի գիտելիքներ վերաբերմունք, մտածողություն , աշխարհաճանաչում, աշխարհասիրություն, գեղարվեստական ունակություններ : Նման դաստիարակությունը հնարավոր է իրագործել ամենուրեք (քանի որ բոլոր վայրերն էլ, ուր բնակվում ենք մենք, ներգրավված են կենսոլորտում) : Յուրաքանչյուրիս վերևում երկինք է՝ ամպերով ծիածանով , աստղերով : Այդ բոլոր վայրերն էլ կրում են ժամանակի և եղանակի ազդեցությունը : Ամենուր կան ծաղիկներ, պարտեզներ, միջատներ , շրջակայքում անտառ, դաշտ և այլն : Այդ առումով բացառիկ է էքսկուրսիաների զբոսանքների , զրույցների, անցկացվող դիտումների դերը : Դրանց շնորհիվ երեխան անմիջականորեն առնչվում է բնությանը , ձեռք բերում որոշակի գիտելիքներ : Բնությունը տեսնելու կարողությունը բնության հետ միասնության զգացում առաջացնելու առաջին պայմանն է:

Բնության մեջ պետք է երեխային ցույց տալ ամեն ինչ՝ ծառ ու ծաղկից մինչև բնապատկեր, ամպերն ու աստղերը , արևն ու երկինքը , շրջական միջավայրում գտնվող ամեն մի տարր , առարկա նյութ, մասնիկ և յուրաքանչյուրի զուգակցված կապը մեկը մյուսի հետ : Դիտումների ընթացքում երեխաները ձեռք են բերում համեմատելու , նկարագրելու, կանխագուշակելու ,հաղորդակցվելու , դասակարգելու և չափումներ կատարելու կարողություններ :

Մարդու դաստիարակության, դրսևորման, զարգացման գործում կարևոր տեղ է զբաղեցնում՝ նախակրթարանը, որը սերտորեն փոխկապակցված է ծնող-հասարակություն կապի հետ. այս եռանկյունու ճիշտ գործելը դրական է ներգործում երեխայի բարոյահոգեբանությանը: Նախակրթարանը դժվար է պատկերացնել առանց տարաբնույթ միջոցառումների: <<Էքսկուրսիա>> բառը լատիներեն նշանակում է կոլեկտիվ ուղևորություն կամ կուլտուր լուսավորչական նպատակ:

Էքսկուրսիան նախադպրոցական դաստիարակության ճյուղերից մեկն է: Նախադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, այն նպատակաուղղված է նրանց հոգևոր, գեղագիտական, ֆիզիկական զարգացմանը :

Արտադպրոցական դաստիարակությունն իրականացվում է մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների, երաժշտական, նկարչական, արվեստի դպրոցների, ճամբարների և արտադպրոցական դաստիարակություն իրականացնող այլ

կազմակեպությունների միջոցով:

Վերը նշված աշխատանքների հիմքում ընկած են մեթոդներ, որոնցով առաջնորդվում է դաստիարակը և որոնց օգնությամբ երեխսների մոտ զարգանում են կարողություններ :Ինչպես ասել է Լև Վիգոտսկին՝ մեթոդի ընտրությունը դարձել է մարդու հոգեբանական գործունեության բացատրության ամենակարևոր խնդիրներից մեկը: Այս պարագայում մեթոդը միաժամանակ նախադրյալ է, նյութ, գործիք և ուսումնառության արդյունք:

Կարևորագույն մեթոդը, որն ընկած է էքսկուրսիայի հիմքում՝ճանաչողական /զննական/մեթոդն է :

Երեխայի ճանաչողությունը տարերային գործընթաց է, որը կապված է էմբրոգենեցիսի ամբողջ ընթացքի հետ: Էմբրոգենեզը կապված է մարմնի ընդհանուր զարգացման, նաև՝ նյարդային համակարգի և մտավոր գործառույթի զարգացման հետ: Դա մի ընդհանրական զարգացման գործընթաց է,որը կապված ճանաչողական համակարգի հետՃանաչել նշանակում է վերափոխել,հասկանալ այդ վերափոխման գործընթացը և, որպես հետևանք, հասկանալ թե ինչպես է այն կառուցված:

Էքսկուրսիան որպես մեթոդ կիրառվում է ուսուցման կազմակերպման ձևի մի փուլ, որից հետո կամ առաջ կարող են կիրառվել նաև այլ մեթոդներ:

Էքսկուրսիայի՝ որպես մեթոդի հիմնական ֆունկցիան ուսումնասիրվող օբյեկտը բնական վիճակում ընկալելն է:

Էքսկուրսիաներն իրենց ծրագրային օրակարգով տարբեր են, դա կապված է, թե ինչպիսի կոլեկտիվ է գնում էքսկուրսիա և որ տարիքային խմբին են պատկանում:

Էքսկուրսիաները զարգացնում, ձևավորում, ամրապնդում են մարդու ճանաչողական, ստեղծագործական կարողությունները: Նա կարողանում է ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել և այդ գիտելիքները ճիշտ կիրառել: Էքսկուրսիան նպաստում է երեխայի հետազոտաստեղծագործական կարողությունների ձևավորմանը և ամրակայում է նրա բազմաբնույթ մտածողությունը, որոնք ի հայտ են գալիս ծննդյան պահից: Էքսկուրսիաներն իրենց կարևոր տեղն ունեն ուսուցման գործընթացն արդյու- նավետ կազմակերպելու մեջ:Այն կիրառվում է տարրական նախակրթարանից : Յուրաքանչյուր տարիքային խմբում այն ձևավորվում է յուրովի՝ ելնելով տարիքային առանձնահատկություններից:

Կարևորում եմ նրանց ճիշտ և տեղին կազմակերպումը: Նախակրթարանում երեխաների մոտ ամեն ինչը դժվարությամբ է

ձևավորվում, նրանց մոտ <<կոլեկտիվ>> հասկացությունը դրսևորվելուց հետո, հաջորդ քայլը՝

էքսկուրսիա գնալն է: Այս տարիքային խմբին նպատակահարմար է տանել տիկնիկային թատրոն՝ նախապես ծանոթացնելով ներկայացման գլխավոր թեմատիկային, էթիկայի կանոներին,անձի դրսևորման գարծոններին:

Այսպես նրանք կկարողանան կողմնորոշվել տարածության մեջ, կզարգացնեն իրենց տեսողական դաշտի պատկերացումները՝ շրջապատող իրերի և անձանց նկատմամբ:

ԳԼՈՒԽ I Էքսկուրսիան որպես ուսուցման կազմակերպման ձև և նրա նշանակությունը:

Մինչ նախադպրոցական սիստեմի վերակառուցման մասին օրենքը, էքսկուրսիաները մեծ մասամբ անց էին կացվում բնությանը, արտադրությանը ծանոթացնելու նպատակով:Օրենքի հրատարակումից հետո ավելի քան երբևէ, բարձրացավ էքսկուրսիայի դերը: Այժմ ուսուցումը կյանքի հետ կապելու, դասավանդման մեթոդներն ու ձևերը կատարելագործելու և ակտիվացնելու նոր պահանջներից ելնելով՝ էքսկուրսիան դիտվում է որպես ուսուցման կազմակերպման մի յուրահատուկ ձև, որպես աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդման միջոց:Գիտելիքի հաղորդումը կարելի է կատարել պարապմունք- էքսկուրսիաների միջոցով՝ նկատի ունենալով , որ այդ ձևով յուրացումն ավելի կայուն ու խորն է լինում, իսկ պարապմունքն ավելի աշխույժ ու հետաքրքիր է անցնում:

1.1 Էքսկուրսիայի անհրաժեշտության հոգեբանական մանկավարժական հիմնավորումը:

Հիմք ընդունելով այն, որ օբյեկտիվ իրական աշխարհի ճանաչողությունը սկսվում է զգայությունից, ուսուցման պրոցեսում մեծ տեղ է տրվում էքսկուրսիային: Իրական աշխարհի զգայություններն ու ընկալումները համապատասխանորեն իմաստավորվում և վերամշակվում են մեր գիտակցության մեջ:Մեր աչքին միանում են մյուս զգայարանները և մտածողության գործունեությունը:Ճնչական ընկալումը հեշտացնում է երեխաների գիտելիքների յուրացման պրոցեսը:Քանի որ երեխաների մտածողությունը զարգանում է կոնկրետից դեպի վերացականը, ուստի զարգացման վաղ էտապներում նրանք մտածում են ավելի շատ պատկերներով, քան հասկացողություններով:Հասկացողությունները և վերացական գաղափարները սովորողի գիտակցությանն ավելի հեշտ են հասնում, եթե դրանք ամրապնդվում են կոնկրետ փաստերով, օրինակներով ու պատկերներով:Այսպես այլ ձևով է ընկալվում և մտապահվում առարկան կամ երևույթը ցուցադրմամբ, այլ ձևով՝ նկարագրությամբ:

Էքսկուրսիոն մեթոդը օգտագործվում էնախա դպրոցական կյանքի տարբեր բնագավառներում և հետապնդում է ինչպես կրթական, այնպես էլ դաստիարակչական նպատակներ:

Էքսկուրսիան դաստիարակին հնարավորություն է տալիս կոնկրետ ու վառ փաստերի վրա երեխաներին ցույց տալ ուսումնասիրվող առարկաների ու երևույթների միջև եղած կապերը, պատճառի ու հետևանքի փոխկապվածությունը և մարդու վերաստեղծող ու վերաշինող ուժը:

Այս ամենը նպաստում են երեխաների մատերիալիստական աշխարհաճանաչողության ու դիտողականության զարգացմանը, նրանց մեջ խոր հետաքրքրություն են առաջացնում դեպի շրջապատը, ամրապնդում են նրանց

1.2. Էքսկուրսիայի կրթադաստիարակչական նշանակությունը:

Էքսկուրսիաները ընդլայնում են երեխեների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք մանկապարտեզ բերել հնարավոր չէ, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, մարդկային հասարակությունը և մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար : Ինչպես հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն էր ասում. :

Նա գտնում էր, որ խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի, առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: ՈՒ մի ձևով հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի:
Էքսկուրսիան լավագույն նյութ է տալիս ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքի զարգացման ու մշակման համար:Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները ամենից ավելի հաջող շարադրություններ գրում են էքսկուրսիաների վերաբերյալ, որովհետև նյութի կոնկրետությունն ու տպավորությունների անմիջականությունը հնարավորություն են տալիս կառուցվածքով կուռ, բառապաշարով հարուստ և լեզվաոճական տեսակետից անթերի շարադրություններ կազմելու:

Պետք է նկատել, որ էքսկուրսիայի ընթացքում ոչ միայն նախատեսված առարկաներն ու երևույթներն են դիտվում, այլ բազմաթիվ այլ նյութեր են հավաքվում (հերբարումներ ու հավաքածուներ կազմելու համար և այլն):

Գլուխ 2 Էքսկուրսիաների նպատակը և բովանդակությունը

2.1 Չի կարելի երբեք էքսկուրսիայի անցկացմանը երկրորդական նշանակություն տալ, լրացուցիչ կամ ավելորդ աշխատանք համարել, դիտել որպես ուսումնական պրոցեսին օժանդակ միջոց: Ծրագրով նախատեսվում է անցկացնել հետևյալ էքսկուրսիաները առաջին կիսամյակի ընթացքում պետք է կազմակերպել էքսկուրսիա՝ գաղափար տալու ամռան և աշնան մասին, , աշնան նշանները՝ եղանակի ցրտում, տերևների գունափոխում, տերևաթափ, թռչունների չուն, աշնանային աշխատանքները բակում, ճանաչել և ճշգրիտ անվանել տվյալ վայրի համար բնորոշ 2-3 տեսակի ծառեր : Երկրորդ կիսամյակի ընթացքում անցկացնել էքսկուրսիաներ՝ իրենց բնակավայրերը և հայրենի բնությունը ուսումնասիրելու համար: Դեպի բնություն կատարվող էքսկուրիաների թեմաներ կարող են լինել՝

ա)մանկապարտեզի շրջակայքը , բ)իրենց փողոցը(քաղաքում),հայրենի գյուղը և այլն:

Երկրորդ կիսամյակում ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել մի շարք էքսկուրսիաներ հետևյալ թեմաներով.

1.Դեպի բանջարանոց՝ բանջարանոցային բույսերի և բանջարեղենների բերքահավաքին, բանջարանոցի մոլախոտերին և նրանց ոչնչացման ձևերին ու միջոցներին ծանոթանալու համար (աշնանը):

2.Դեպի անտառ անտառի ծառերին, թփերին ու անտառի բնակիչներին ծանոթանալու նպատակով:

3.Դեպի երեխաների բնակված թաղամասը կամ գյուղը՝ մարդկանց աշխատանքային գործունեության վերաբերյալ երեխաների պատկերացումներն

2.2. Էքսկուրսիայի անցկացման մեթոդիական

Էքսկուրսիայի ճիշտ անցկացումը դաստիարակից պահանջում է էքսկուրիայի նպատակի և բովանդակության ճիշտ պլանավորում, կազմակերպում և ստացված արդյունքների ամփոփում:Այդ տեսակետից էքսկուրսիայի կազմակերպման ժամանակ ուշադություն պետք է դարձնել նրա երեք հիմնական փուլերի վրա՝

1.Նախապատրաստում

2.Անցկացում

3.Ամփոփում

ա)Էքսկուրսիայի նախապատրաստումը.

Յուրաքանչյուր էքսկուրսիա որոշակի նպատակ պոտք է ունենա, նպատակ, որը պետք է բխի ծրագրի առաջադրած խնդիրներից ու պահանջներից:Էքսկուրսիայի նպատակը և օբյեկտը պետք է կոնկրետ ու որոշակի լինի, որպեսզի ըստ այդմ էլ պարզ լինի , թե էքսկուրսիայի ընթացքում երեխաները ինչ գիտելիքներ են ստանալու, ինչ նյութեր ուսումնասիրելու կամ հավաքելու, ինչ գործնական աշխատանքներ են կատարվելու և ինչի համար, երբ և ինչպես է անցկացվելու էքսկուրսիան:Երբ այսքանը արդեն դաստիարակի համար պարզ է և նա գիտի , թե ուր է էքսկուրսիա տանելու, երբ և ինչ նպատակով, կարող է որոշակիորեն պատկերացնել, թե ինչ հարցերի շուրջ հարկ կլինի խոսել էքսկուրսիայի ժամանակ, ինչ գիտելիքներ պետք է տա երեխաներին և ինչ չափով, ուստի ըստ այդմ էլ նա հաշվի կնստի ինքն իր հետ, թե նա ինչ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրություններ անցկացնելու կարիք ունի:

Յուրաքանչյուր էքսկուրսիայի նպատակը որոշելուց հետո պարտադիր կարգով դաստիարակը պետք է վերստին մանրամասնորեն ուսումնասիրի այդ թեման , թարմացնի ու լրացնի իր գիտելիքները այդ թեմայի վերաբերյալ, որպեսզի կարողանա երեխաներին բավարար չափով տեղեկություններ տալ տվյալ օբյեկտի մասին, ճիշտ ու պարզ պատասխաններ տալ էքսկուրսիայի ընթացքում ծագած հարցերին:Նյութերի ուսումնասիրությունից հետո պետք է կատարել էքսկուրսիայի վայրի ընտրություն, որոշվի ընթացքը և դեպի էքսկուրսիա տանող նպատակահարար ճանապարհը:

Այսպիսի նախնական ուսումնասիրությունից հետո դաստիարակը կարող է կազմել էքսկուրսիայի պլանը, որը կարևոր նշանակություն ունի հետագա աշխատանքների ճիշտ կազմակերպման համար:

Պլան կազմելիս պետք է հաշվի առնել հետևյալ հիմնական հարցերը.

1.Էքսկուրսիայի թեման

2.Այն գիտելիքների համառոտ շարադրանքը, որ երեխաները պետք է ստանան էքսկուրսիաների ընթացքում:

3.Էքսկուրսիայի ընթացքն ու հաջորդականությունը, էքսկուրսիայի ընթացքում շոշափվող հիմանական հարցերը, երեխաներին տրվելիք խմբային կամ անհատական
աշխատանքի առաջադրանքները:

4.Էքսկուրսիայի վերջում անցկացվող ամփոփիչ զրույցի համառոտ բովանդակության շարադրումը:

5.Էքսկուրսիայի կահավորումը՝ հանդերձանքը, գործիքները և այլն:

Օրինայ կարելի է կազմել աշնանը վերաբերվող էքսկուրսիայի այսպիսի պլան.

Էքսկուրսիայի թեման- աշուն

Էքսկուրսիայի նպատակը – գաղափար տալ աշնան մասին , սովորեցնել Ճանաչել ու զգալ բնության մեջ կատարվող եղանակային փոփոխությունները:

Էքսկուրսիայի նախապատրաստում- բացատրել էքսկուրսիայի նպատակը և երեխաներին շարք կանգնեցրած տանել էքսկուրսիայի վայրը՝ դպրոցի բակը կամ դպրոցից ոչ շատ հեռու:

Էքսկուրսիայի անցկացում – Էքսկուրսիայի վայրը հասնելուց հետո թույլ տալ , որ երեխաները կանգնեն ինչպես որ կամենում են, և հանձնարարել , որ դիտեն շրջակայքը:Մի քանի րոպեից հետո հարցերի միջոցով վեր հանել նրանց տեսածն ու զգացածը:

-Ի՞նչ եք զգում (ցուրտ է, փչում է սառը քամի, տերևները թափվում են և այլն):

-Ինչպիսի՞ն է երկինքը (այն ծածկված է ամպերով, մշուշ է, արևը չի երևում):

-Ծառի վրա շա՞տ տերևներ կան , թե՝ քիչ, ի՞նչ են եղել նրանք:

-Այժմ տարվա ո՞ր եղանակն է:

-Որո՞նք են աշնան նշանները:

Էքսկուրսիայի ամփոփում – վերջին հարցի պատասխանն էլ կլինի էքսկուրսիայի ամփոփումը: Այդ հարցին պատասխանելու համար երեխաներին օգնել իրենց դիտումների ու զգացածի վերաբերյալ կոնկրետ եզրակացություններ անելու՝ փչում է ցուրտ քամին, ծառերից թափվում են տերևները, արևը չի երևում, երկինքը ծածկված է ամպերով…- դա աշունն է:

Էքսկուրսիայից մեկ-երկու օր առաջ դաստիարակը երեխաներին բացատրում է նպատակը, խնդիրները, աշակերտների անելիքները: Առանց այդպիսի գործնականորեն ու հոգեբանորեն նախապատրաստության , էքսկուրսիան կդառնա աննպատակ ու անարդյունավետ:

Երեխաներին էքսկուրսիային նախապատրաստելու աշխատանքների մեջ մտնում են նաև կարգապահության պահպանման ուղղությամբ տարվող միջոցառումները, զրույցը այդ ուղղությամբ:

Քանի որ էքսկուրսիաները լինում են մոտավոր և հեռավոր, ուստի հեռավոր էքսկուրսիայի դեպքում պետք է խորհրդակցել նաև ծնողների հետ:

Էքսկուրսիայի նախապատրաստական աշխատանքների մեջ պետք է ներառել նաև տնօրինությանը՝ էքսկուրսիայի անցկացման վայր և մյուս հարցերի մասին տեղյակ պահելը, էքսկուրսիայի պլանը հաստատել տալը, որպեսզի անհրաժեշտության դեպքում նրանք համապատասխան միջոցներ ձեռք առնեն փոխադրական միջոց տրամադրելու կամ ժամերը դասավորելու համար:

Էքսկուրսիայի անցկացումը սկսվում է նրանով, որ էքսկուրսիայի վայրում դաստիարակը ի մի է հավաքում բոլոր երեխաներին, հիշեցնում էքսկուրսիայի նպատակը, տրված առաջադրանքները, երեխաների անելիքներն ու պարտավորությունները:

Էքսկուրսիայի ժամանակ դաստիարակը երեխաների մեջ պետք է հետաքրքրություն առաջացնի դեպի օբյեկտը, որպեսզի երեխաները անհրաժեշտ ուշադրությամբ դիտի այն:

Գլուխ 3. Էքսկուրսիայի կրթադաստիարակչական նշանակությունը:

Էքսկուրսիաները ընդլայնում են երեխաների մտահորիզոնը, նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով, անմիջականորեն դիտել են տալիս այնպիսի առարկաներ ու երևույթներ, որոնք դպրոց բերել հնարավոր չէ, հետաքրքրություն են առաջացնում դեպի իրենց շրջապատի բույսերը, կենդանիները, մարդկային հասարակությունը և մարդու աշխատանքը բնության և հասարակության մեջ:

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման համար : Ինչպես հայ նշանավոր մանկավարժ Ա. Բահաթրյանն էր ասում. «Ուսուցման մեջ առաջինը և կարևորը դիտողականությունն է, երեխայի առաջին դիտողականությունները վարժեցնում են նրա զգայարանները, իսկ զգայարանն այն դուռն է, որով արտաքինը մտնում, թափանցում է ներքին աշխարհը, ինչ-որ չի անցնում զգայարաններով, նա առհասարակ չի մտնում հոգու մեջ, ուստի միշտ ուսուցման պրոցեսում նախ պետք է երևան գա գաղափարը, իսկ հետո՝ բառը: Միայն այդպես կարելի է դիտողականությամբ մշակել լեզուն, իսկ լեզվով՝ հոգին ու միտքը :խոսքը չի կարող զարգանալ առանց մտքի, իսկ միտքը զարգանում է, եթե մտքի, առարկայի մասին երեխան պարզ ու կոնկրետ պատկերացում ունի: Ու ոչ մի ձևով հնարավոր չէ նոր բառերի յուրացումն այնքան կայուն դարձնել, որքան էքսկուրսիայի միջոցով, որովհետև այստեղ բառը կապվում է տվյալ

հասկացության, իրի կամ երևույթի դիտման ու զննման հետ, դառնում է կոնկրետ ու որոշակի:

Էքսկուրսիան լավագույն նյութ է տալիս ոչ միայն բանավոր, այլև գրավոր խոսքի զարգացման ու մշակման համար:Փորձը ցույց է տալիս, որ երեխաները ամենից ավելի հաջող շարադրուբ են իրենղմտքը էքսկուրսիաների վերաբերյալ, որովհետև նյութի կոնկրետությունն ու տպավորությունների անմիջականությունը պատկերավոր է:

Պետք է նկատել, որ էքսկուրսիայի ընթացքում ոչ միայն նախատեսված առարկաներն ու երևույթներն են դիտվում, այլ բազմաթիվ այլ նյութեր են հավաքվում (հերբարումներ ու հավաքածուներ կազմելու համար և այլն):

Էքսկուրսիաները բացառիկ կարևոր նշանակություն ունեն նաև դաստիարակչական տեսակետից: Դրանք երեխայի մեջ զարգացնում են ուշադրություն ու դիտողունակություն, մշակում են գիտակցական կարգապահություն ու կազմակերպվածություն՝ դպրոցից դուրս իրենց պահելու ուսուցչի կարգադությունները ժամանակին, ճիշտ ու անթերի կատարելու ունակություն:

Էքսկուրսիաների միջոցով երեխան ծանոթանում է երկրի մակերևույթի ձևերին, զգում հայրենի բնության գեղեցկությունը և ամենից շատ սիրում ու գնահատում այն:Էքսկուրսիայի ժամանակ զարգանում է նաև երեխաների էսթետիկական ճաշակը, նրանք կարողանում են գեղեցիկը տեսնել ամեն տեղ՝ բնության մեջ, կյանքում և աշխատանքում:

Էքսկուրսիայի ընթացքում ձևավորվում են շատ բարոյական նորմեր՝ ընկերասիրություն, կոլեկտիվիզմ, փոխօգնություն և այլն:

Էքսկուրսիայի ժամանակ երեխաները ձեռք են բերում բնավորության այնպիսի գծեր ինչպիսիք են հաստատակամություն, համառություն, դժվարությունները հաղթահարելու կամք:

Էքսկուրսիայի ժամանակ բացահայտվում է երեխայի բնավորությունը, նրա շատ ընդունակություններ ի հայտ են գալիս:

Էքսկուրսիայից ստացած տպավորությունները ավելի անմիջական են և պահպանվում են ավելի երկար: Եվ պատահական չէ, որ ասում են լավ է մեկ անգամ տեսնել, քան տաս անգամ լսել: Օրինակ ՝ ավագ խմբերում երեխաների գիտելիքները ավելի կայուն կդարնան, երբ էքսկուրսիայի ժամանակ իրենց աչքով տեսնեն և դրան զուգահեռ լսեն թե ինչ է գետի հունը, աջ և ձախ մասերը և այլն: Էքսկուրսիայի ժամանակ շատ երևույթներ երեխաները կարող են տեսնել, բայց չհասկանալ, այս գործում մեզ օգնության է գալիս դաստիարակի բացատրությունը, որը կարող է ինչպես նախորդել, այնպես էլ զուգակցել ու հաջորդել էքսկուրսիային:Գիտելիքների ընկալմանը հաջորդող էքսկուրսիան նպաստում է

երեխաների նախօրոք ստացած գիտելիքների ամրապնդմանը, իսկ թեմային նախորդող էքսկուրսիան հիմք է հանդիասանում նոր գիտելիքների ընկալման համար, նախնական տվյալներ են հավաքում այս կամ այն թեման յուրացնելու համար:

Ուսուցման պրոցեսում կարևոր նշանակություն ունեն նաև արտադրական էքսկուրսիաները: Այս կամ այն առարկաներից գիտելիքներ սովորելով՝ երեխաները ծանոթանում են (հատկապես ավագ խմբերում) այն պարզ սարքերին , որոնք հիմք են հանդիսանում ամենաճշգրիտ ու ամենաբարդ մեքենաների ստեղծմանը որից ծնվում են ամենաբարդ արտադրական պրոցեսները:

Գլուխ 4 Այցելություն – էքսկուրսիաների նշանակությունը

4.1 Ենթադրվում է որ արվեստին ու նրա ուղղություններինանմիջականորեն առնչվող էքսկուրսիաները այցելություններ են դեպի մշակույթի տարբեր օջախներ՝ թանգարաններ , տուն թանգարաններ , Մատենադարան , պատկերասրահներ , ցուցահանդեսներ , թատրոններ: Ընդհանուր առմամբ էքսկուրսիաները կոչված են արթնացնելու երեխաների հետաքրքրությունները և խթանելու նրանց ստեղծագործական ակտիվությունը : Էքսկուրսիայից քաղված արդյունքը մեծ մասամբ կախված է դրանց կազմակերպման և իրականացման որակից , ինչպես նաև այն հանգամանքից , թե դաստիարակը որքանով է այն հետաքրքիր և օգտակար դարձնում:

Թանգարան այցելությունը մի իրադարձություն է երեխայի և ընտանիքի կյանքում, որը հիացնում է բոլորին՝ մեծերին և երեխաներին և էմոցիոնալ ազդեցություն է թողնում նրանց վրա: Կարևոր է, որ այս ուղևորությունը դեպի թանգարան հետք թողնի երեխայի հոգում, ուստի պետք է պատրաստվել այցին: Թանգարանն ունի էքսկուրսիաներ և այցելուներին ծանոթացնում ցուցանմուշներին ու ցուցահանդեսներին: Եթե չեք օգտվում դրանց ծառայություններից, ապա պետք է նկատի ունենալ, որ թանգարաններն ունեն մեծ դահլիճներ և բավականին շատ հետաքրքիր իրեր, ուստի խորհուրդ է տրվում նախօրոք մտածել կամ տեղում կողմնորոշվել, թե ինչ և ինչ ծավալով ցուցադրել երեխա. Երեխաները արագ են

հոգնում, նրանք չեն կարողանում միանգամից մեծ քանակությամբ տեղեկատվություն ստանալ: 3-5 տարեկան երեխաների հետ խորհուրդ է տրվում անցկացնել մինչև 30 րոպե տևողությամբ քննություն, ավելի մեծ նախադպրոցականների հետ կարելի է թանգարանի սրահներով շրջել մինչև 1 ժամ, եթե նրանք հետաքրքրված են և հոգնածություն չեն ցուցաբերում: Քանի որ թանգարանը պարունակում է հարուստ և բազմազան ցուցադրություններ, որոնք հնարավոր չէ անմիջապես դիտել, նպատակահարմար է և ցանկալի է կազմակերպել այցելություններ թանգարան մեկից ավելի անգամ:

Երեխայի արվեստի աշխարհ մուտքի գործընթացը անհատական է. Առաջին այցելությունները ամենաուժեղն ու խորն են, ուստի շատ կարևոր է ուշադիր պատրաստվել առաջին էքսկուրսիային: Մեզնից՝ մեծերից է կախված, թե երեխան նորից թանգարան գնալու ցանկություն ունի: Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականաությունը: Էքսկուրսիան այցելություն է դեպի տեսարժան վայրեր, թանգարաններ, պատմամշակութային հուշարձաններ: Այն ինչը աշակերտը տեսնում է, տպավորվում է նրա գիտակցության մեջ: Էքսկուրսիան կարող է վարել ուսուցիչը և էքսկուրսավարը, որոնց մեկնաբանմամբ աշակերտը սովորում է ճիշտ ընկալել իր տեսածը, ցուցադրածը: էքսկուրսիաները շատ կարևոր են այն առումով, որ աշակերտը կարևորում է իրեն փոխանցված պատմամշակութային ժառանգությունը, դառնում է նրա կրողը և փոխանցողը հետագա սերունդներին: էքսկուրսիաները նաև պատմամշակութային արժեքների պահպանման և դրանց անվտանգության ապահովման, հուշարձանների տարածքի անխաթարության միջոց են: Աշակերտները խորությամբ ճանաչում են իրենց հայրենիքը, ծննդավայրը, նրա ռազմավարական նշանակությունը, բնության գողտրիկ վայրերը, ծանոթանում են բնական հարստություններին, գիտության, մշակութային ձեռքբերումներին:

էքսկուրսիաները նպաստում են քրիստոնեական արժեհամակարգի ամրապնդմանը, ազգային գաղափարախոսության: Դրանք ընդլայնում են աշխարհաճանաչողությունը, ձևավորում աշխարհայացք, հարստացնում են գիտելիքները, զարգացնում՝ հետաքրքրասիրություն, ինքնաճանաչում, ինքնագործունեություն և նախաձեռնողականություն, դաստիարակում են սեր

դեպի բնությունը, հուշարձանները, դեպի ընկերը և մարդը, նպաստում են միջանձնային շփումներին: Աշակերտը դառնում է ավելի համարձակ, բանիմաց, առողջ և կոփվում է ֆիզիկապես:

Էքսկուրսիաները լինում են թեմատիկ և ընդհանուր: Ընդհանուր էքսկուրսիաները ավելի համընդգրկուն են, իսկ թեմատիկները կարող են լինել պատմական, արվեստագիտական, պատերազմապատմական, բնապատմական, իսկ թեմատիկ էքսկուրսիաները ունեն կոնկրետ ուղվածություն:

Ըստ անցկացման վայրի էքսկուրսիաները կարող են լինել բնակավայրի որևէ թաղամասում, թանգարանում, բնակավայրից դուրս, վանական համալիրներում, ամրոցներում, սրբավայրերում, արգելոցներում : Կարող են կազմակերպվել նաև արտադրական էքսկուրսիաներ որևէ գործարանում, հանքաշահագործման վայրում:

Կրթադաստիարակչական նպատակներով կարելի է կիրառել նաև ուսումնական էքսկուրսիան: Ուսումնական էքսկուրսիա անցնելուց առաջ դաստիարակը անց է կացնում թեմատիկ զրույց, քննարկում: Ուսումնական էքսկուրսիան ուսումնական գործընթացի կազմակերպման մի ձև է,պարապմունքի մի տեսակ:

Աշխատանքի նպատակը: Մեծացնել աշակերտների մոտ սերը հայրենիքի և հայրենի բնաշխարհի, մշակույթի և հոգևոր արժեքների նկատմամբ, զարգացնել աշխարհաճանաչողությունը և աշխարհայացքը:

Հետազոտական աշխատանքի ընթացքը

Պարապմունք

Մեթոդիկան՝ - << Ինձ շրջապատող աշխարհը >>

Թեմա ՝ - << Աշնան գույներ >>

Տեսակը ՝ - Զրույց, դիտում

Նպատակը՝ - Ծանոթացնել երեխաներին աշնանը բնության մեջ կատարվող փոփոխություններին : Զարգացնել պատկերացումը աշնան գույների մասին : Դաստիարակել սեր և հոգատարություն շրջապատող միջավայրի հանդեպ :

Վերջնարդյունք՝ - Կդրսևորի դրական վերաբերմունք բնության նկատմաբ: Կնկատի բնության գեղեցկությունը : Կդրսևորի ճիշտ վարքագիծ բնության գրկում :

Անհրաժեշտ պարագաներ՝ - Զամբյուղներ, մատիտներ թղթեր :

Կապը չափորոշչի ոլորտի հետ՝ - Լեզվակն և հաղորդակցման , ճանաչողական և մոտիվացիոն :

Պարապմունքին անցում եմ կատարել ԽԻԿ համակարգով, որի ժամանակ մասնակցել են կրտսեր խմբի սաները , դաստիարակըև մանկապարտեզի մեթոդիստը :

Ընթացք

ԽԻԿ համակարգով կազմակերպել եմ պարապմունք, որի ժամանակ մասնակցել են 30 սան : Երեխաների հետ դուրս եկանք մանկապարտեզի բակ, որտեղ ծառերը զարդարված են աշնան գեղեցիկ գույներով: Երեխաները իրենց վառվռուն աչքերով զննում էին շուրջբոլորը :

Խթանում՝ - Երեխաներ, որտե՞ղ ենք եկել, ինչ ե՞ք տեսնում շրջապատում :

Դաստիարակ՝ - Պատմում :

Երեխաներ – եկել ենք բակ, այստեղ կա շա՜տ

Դաստիարակ – շատ ճիշտ է , իսկ որտեղի՞ց են թափվել:

Երեխաներ – ծառերից :

Դաստիարակ – իսկ ինչու հիմա տարվա , որ եղանակն է ,

Երեխաներ – որովհետև աշուն , քամին պոկել է և թափել

Դաստիարկ – երեխաներ կարող եք ասել տերևներն ի՞նչ գույն ունեն :

Երեխաներ – կարմիր , դեղին , նարնջագույն, կանաչ :

Դաստիարակ – դուք սիրում եք տերևներ

Երեխաներ – այո, շատ

Դաստիարակ – դե եկենք հավաքենք , զամբյուղների մեջ լցնենք, որ տանենք խմբասենյակ , որպեսսի աշնանային գեղեցիկ աշխատանքներ կատարենք:

Իմաստի ընկալում՝

- Երխաներ, տեսնում եք այն ծառն, ի՞նչ գույն ունի
- Այո այն կանաչ է:
- Իսկ ինչու է կանաչ , կասե՞ք
- Ոչ , չգիտենք
- Երեխաներ այս ծառը եղևնի է :
- Եղևնին ամբողջ տարին կանաչ է լինում և նրա տերևները չեն թափվում
- Հիմա դրսում ի՞նչ եղանակ է, աշուն է, դրսում մի քիչ ցրտել է, ապա վերև նայեք , ի՞նչ եք տեսնում :
- Թռչունների երամ , նրանք թռչում են
- Շատ ճիշտ է դա երևում է, նրանք չվում են տաք երկրներ:

-**ֆիզկուլտդադար** << խաղալտերևներով և փչել >> :

- Եկեք մի փոքրիկ ոտանավոր ունկնդրենք և ուշադիր ինձ նայեք:
- Աշուն եկավ , սիրուն աշուն

  Ոսկի փռեց այգում , դաշտում,

  Տերևի հետ պարեց քամին ,

  Քշեց տարավ , հանեց սարին :

Երեխաները վերադառնում են խմբասենյակ իրենց հետ տանելով հավաքած տերևները :

Կշռադատում՝ - երեխաներ ինչ տպավորություն ստացաք էքսկուրսիայից:

- Մեզ համար շատ հաճելի էր և ուրախ :
- Ինչպիսի՞նն են աշնան գույները
- Շատ տաք և գեղեցիկ :
- Դե եկե՛ք նկարենք աշունը և աշնան գեղեցիկ գույներով տերևները :

Երեխաները աշխատում են նկարչության կնտրոնում և թղթին պատկերում էքսկուրսիայից ստացած տպավորությունները :

Պարապմունքը դիտարկողների կարծիքով

շատ ուսուցողական էր և արդյունավետ, քանի որ մեկ պարապմունքի ընթացքում զարգացան երեխաների ճանաչողական գիտելիքներն ու կարողությունները, երեխաները սովորեցին համագործակցել միմյանց հետ,տալ հարցեր և ստանալ պատասխաններ, և իվերջո երեխաները ստացան բազում նոր տեսական գիտելիքներ: Դիտարկողների կարծիքով պարապմունքը զարգացրեց երեխաների ճանաչողական հմտությունները և նպաստեց խոսքի զարգացմանը, Երեխաները իրենց լավ էին զգում ակտիվ մասնակցում էին , մեկը մյուսին հերթ չտալով հարցեր էին տալիս, փնտրում պատասխաններ:

Դիտարկողների կարծիքով էքսկուրսիաներն առհասարակ կարևոր դեր ու նշանակություն ունեն երեխաների զարգացման,հետաքրքրությունների բավարարման, նոր վայրերի, երևույթների, գիտելիքների հարստացման գործում: Էքսկուրսիաների ընթացքում երեխաները լիցքաթարփվում են , ուրախանում, շփվում միմյանց հետ, նոր հմտություններ ձեռք բերում, այս ոչ ֆորմալ էքսկուրսիան նույնպես շատ հետաքրքիր էր , հագեցած, որի շնորհիվ ապահովվեց վերը նշված կետերը:

Եզրակացություն

Մարդը բնության մի մասն է : Նա իր կենսագործունեությամբ հազարավոր թելերով կապված է բնությանը : Մարդկության առաջ խնդիր է ծառացել կարգավորելու , կայունացնելու, հավասարակշռելու իր հարաբերությունները բնության հետ :

էքսկուրսիաները շատ են օգնում երեխաների ինքնաարտահայտման , ինքնքդրսևորման հարցերում , եթե վերջինները մասնակցում են տվյալ էքսկուրսիայի և թեմատիկայի անցկացմանը , իսկ դաստիարակները ընդամենը ուղղորդում են նրանց և արդյունքում ավելի լիարժեք են ճանաչում իրենց սաներին : էքսկուրսիաները հնարավորություն են տալիս , որպեսզի զարգանա երեխաների ինքնուրույնությունը , որոնց շնորհիվ կլուծվի նաև ինքնիրացման խնդիրները, իսկ ուսումնական գործընթացը կլինի ավելի բովանդակալից և հետաքրքիր : Շնորհիվ էքսկուրսիաների՝ երեխաները ավելի լիարժեք են ճանաչում իրենց շրջապատող աշխարհը :էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների մեջ առաջ է բերում աշխարհայաքի բարձր արժեհամակարգի ձևավորում և մշակույթի ըմբռնման հմտությունների յուրացում: Ամփոփելով իմ հետազոտական աշխատանքը կարող եմ ասել , որ էքսկուրսիաները նպաստում են դիտողականության, ստացված տպավորությունը վերլուծելու և ընդհանրացնելու, տեսածը հուզականորեն վերապրելու, ստեղծագործաբար ընկալելու և ըմբռնելու կարողությունների խթանմանը:

Կցանկանայի, որ էքսկուրսիաները շարունակական բնույթ կրեն և դաստիարակները իրենց աշխատանքի հիմնական բաղկացուցիչ մաս դարձնեն այն :

Օգտագործված գրականության ցանց

- Ա.Դալլաքյան, Ս.Ա Մարույան «Նախադպրոցական մանկավարժություն» Երևան 2008թ.
- «Նախաշավիղ» գիտամեթոդական փաթեթ
- Ծննդից միչև վեց տարեկան զարգացման և կրթական չափորոշիչներ. Երևան 2018
- << Կրթությունը թանգարանում ուսումնամեթոդական ձեռնարկ >> Ալվարդ Գրիգորյան ,Աստղիկ Մարաբյան
- http\ multiurok.ru \files\ man-kazmake8pman-dzev.html
- <<Դաստիարակի ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում>> Երևան 2011թթ
- << Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում >> մեթոդական ուղեցույց Երևան 2007թ.